ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ԼԻԼԻԹ ԽԱՌԱՏՅԱՆ

Ժողովրդավարության զարգացման պայմաններում պետությունները ներպետական իրավական ոլորտում իրավական ինստիտուտների և նորմերի միջոցով փորձում են սահմանել նրանց իրավական կարգավիճակը: ԶԼՄ-ների իրավական կարգավորման խնդիրը հատկապես կարևոր է այն առումով, որ պետությունը՝ որպես ամբողջություն, պետության իրավապահական համակարգը, պաշտոնատար անձանց գործունեությունը, օրինականությունը, հասարակության բարոյականությունը և այլ արժեքներ, հանրությունը ընկալվում են ԶԼՄ-ների տեսանկյունից: Պետությունը, բացի հիմնական օրենքում արտացոլված լրատվամիջոցների դրույթներից, ունի ԶԼՄ-ների ոլորտը կարգավորող առանձին օրենքներ: ԶԼՄ-ների իրավական կարգավորման նպատակները կոչված են ապահովելու մի կողմից՝ «լրատվամիջոցների՝ որպես ժողովրդավարության ինստիտուտի գործունեության համար բարենպաստ պայմանները», մյուս կողմից՝ «անձի, հասարակության և պետության, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունը»[1]:

«Զանգվածային լրատվամիջոցների ազատությունը» բավական ընդգրկուն հասկացություն է և ներառում է խոսքի, մամուլի, լրատվամիջոցի գործունեության ազատությունը, ԶԼՄ-ների անկախությունը, բազմակարծությունը, արտահայտվելու ազատությունը, խմբագրական ինքնուրույնությունը և այլն: Որպես կանոն, ԶԼՄ-ների օրենսդրության սկզբունքային դրույթներն ամրագրված են պետությունների սահմանադրություններում, օրինակ՝ մտքի և խոսքի ազատությունը, գրաքննության արգելումը, ստեղծագործելու ազատու-

[1] Տե՛ս **Федотов М.А.** Правовые основы журналистики. М.: СПАС, 2001, с. 8. Fedotov M. A. Pravovye osnovy zhurnalistiki. M.2001. s.8.

թյունը[2]: Թեև ոչ բոլոր պետություններն են ներառել իրենց օրենքներում այդ սկզբունքները: Այսպես, ՀՀ սահմանադրությամբ ամրագրված չեն գրաքննության արգելումը և ստեղծագործական գործունեության ազատությունը:

Նախ և առաջ ԶԼՄ-ների իրավական կարգավորման հիմքում ընկած են սահմանադրությամբ ամրագրված ղեկավար սկզբունքները և երաշխիքները:

Այսպես, ԶԼՄ-ների գործունեության հիմքում որպես ղեկավար սկզբունք ընկած է այն հիմնարար դրույթը, համաձայն որի՝ առանց ԶԼՄ-ների ազատության և բազմակարծության՝ լիիրավ ժողովրդավարության հնարավոր չէ հասնել: Այս դրույթն ամրագրվել է մի շարք միջազգային իրավական ակտերում, այն նույնիսկ արձանագրել է *ազատ կարծիքների արտահայտման հարցերով ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցչությունը, համաձայն որի*՝ իրադարձությունների լուսաբանումը ԶԼՄ-ների միջոցով պետք է իրականացվի՝ բացառելով գրաքննությունը և ԶԼՄ-ների գործունեության միջամտության անթույլատրելիությունը՝ ընդսմին, ապահովելով լրագրողների պաշտպանությունը բռնություններից, տեղեկատվության հասանելիությունը, գաղափարների և կարծիքների բազմազանությունը:

Գաղափարախոսական և քաղաքական բազմազանություն արտահայտող երաշխիք է բազմակարծության սկզբունքը՝ ամրագրված ՀՀ սահմանադրությամբ (հոդված 7): ՀՀ-ում գաղափարախոսության որևէ սկզբունք չի կարող ընդունվել կամ հաստատվել որպես պարտադիր կամ պետական: Միևնույն ժամանակ սահմանադրությունը կարծիքներն ազատ արտահայտելու իրավունքի իրացման համար սահմանել է համապատասխան պաշտպանական մեխանիզմներ, որոնցով ապահովվում է տեղեկատվական բազմակարծությունը, և կանխարգելվում ԶԼՄ-ները մենաշնորհելու ամեն մի փորձ: Որպես գաղափարախոսական բազմակարծության դրսևորման ձև, առանձնանում է տեղեկատվական բազմակարծությունը, որը մի կողմից՝ երաշխավորում է լրատվամիջոցների բազմազանությունը, ԶԼՄ-ների թողարկման ու տարածման ազատությունը, տեղեկատվության մատչելիությունը, մյուս կողմից՝ արտահայտում ԶԼՄ-ների խմբագրական անկախության ապահովման և ինքնակարգավորման կանոնների պայմաններում տարբեր քաղաքական, սոցիալական, կրոնական և մշակութային հայացքները:

2005թ. ՀՀ-ում անցկացվեցին սահմանադրական բարեփոխումներ, որոնցով լրատվամիջոցների ազատության սկզբունքը դրվեց առավել հաս-

---

[2] Տե՛ս **Рихтер А. Г.** Правовые основы журналистики. Электронный ресурс. Rikhter A. G. Pravovye osnosy zhurnalistiki. Elektronnyj resurs.

տատուն հիմքի վրա: Եթե նախկին սահմանադրությամբ գոյություն չուներ մամուլի ազատության որևէ դրույթ, ապա այս փոփոխությունների շնորհիվ արդեն սահմանադրական մակարդակով երաշխավորվեց լրատվամիջոցների ազատությունը: Միաժամանակ երաշխավորվեցին նաև տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն ապահովող հանրային լրատվամիջոցների առկայությունը և գործունեությունը[3]:

Խոսքի ազատության իրավունքը, որը սերտորեն փոխկապված է ՁԼՄ-ների արտահայտվելու իրավունքի և տեղեկատվության ազատության հետ, հռչակված է զգալի թվով պետությունների սահմանադրություններում: Այսպես, ՀՀ սահմանադրության 27 հոդվածով ամրագրված է խոսքի ազատության և կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը[4], ՌԴ սահմանադրությունում առկա է մտքի և խոսքի ազատության իրավունքը[5], նմանատիպ դրույթ առկա է նաև հետխորհրդային պետությունների հիմնական օրենքներում, սակայն որոշ երկրներ ավելի առաջ են գնացել և խոսքի իրավունքից բացի, երաշխավորել են նաև այլ հիմնարար իրավունքներ, օրինակ՝ Ռուսաստանի, Ղազախստանի սահմանադրությունները երաշխավորում են ստեղծագործության ազատությունը: Բացի այդ, գրեթե բոլոր նախկին խորհրդային պետությունների սահմանադրություններով արգելվում է գրաքննությունը: Այն երկրներում, որտեղ տարիներ շարունակ տիրում էր գրաքննություն[6], խոսքի ազատության իրավունքի բովանդակային բաղադրատարր էր դիտարկվում տեղեկատվության ազատության իրավունքը: Տեղին է Շեստոպալի համոզմունքն այն մասին, որ «զանգվածային տեղեկատվության երաշխիքը գրաքննության արգելքն է»[7]: Ի տարբերություն ՌԴ և մյուս հետխորհրդային երկրների սահմանադրությունների, որոնցով դեռևս 1990-ականներից է երաշխավորված մամուլի ազատությունը գրաքննությունից, ՀՀ սահմանադրությունը թեև երաշխավորում է լրատվամիջոցների ազատությունը, գրաքննության արգելքի վերաբերյալ որևէ նորմ մինչ օրս չի սահմանում: Հայտնի

---

[3] Տե՛ս ՀՀ սահմանադրություն, հոդված 27: HH Sahmanadrutyun, h. 27.

[4] Տե՛ս ՀՀ սահմանադրություն, 2005 թ., հոդված 27: HH Sahmanadrutyun, h.27.

[5] Տե՛ս ՌԴ սահմանադրություն, 1993 թ., հոդված 23: RD Sahmanadrutyun, h.23.

[6] Տե՛ս **Афанасьев А. Л.** Гиперболизация в советской прессе (вторая половина 50-х начало 80-х годов, М. 2000, с. 7. Afanasjev A. L. Giperbolizaciya v sovetskoj presse (vtoraya polovina 50-ykh nachalo 80-ykh.).

[7] Տե՛ս **Шестопал Е. Б**. Новые тенденции восприятия в России, М., 2005, с. 37. Shestopal E. B. Novye tendencii vospriyatiya v Rossii. M., 2005, s. 37.

է, որ գրաքննությամբ, որպես կանոն, պետության կողմից սահմանափակվում են գաղափարներ, կարծիքներ, տեղեկատվություն ստանալու և տարածելու ազատություն, վերահսկվում են տեղեկատվական հոսքերը, նյութերը և հաղորդագրությունները: Ուստի հիմնվելով ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի վրա, համաձայն որի, սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, որի նորմերը գործում են անմիջականորեն, ավելի նպատակահարմար կլիներ, գրաքննությունն արգելվեր անմիջապես ՀՀ սահմանադրությամբ, այլ ոչ թե «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով[8]:

Զանգվածային լրատվամիջոցների իրավական կարգավորման հիմնախնդիրն անմիջականորեն կապված է արտահայտվելու իրավունքի հետ: Դեռ ավելին, խոսքի իրավունքը և դրա՝ օրենքին չհամապատասխանող սահմանափակումները միջազգային կառույցների մշտական վերահսկման առարկա են: Բարձր գնահատելով պետությունների ժողովրդավարության զարգացման աստիճանը՝ միջազգային այդ կառույցներն ընդունում են և ողջունում նաև ընդդիմադիր մամուլի ստեղծման հնարավորությունը՝ նկատի ունենալով այն, որ խոսքի ազատության բացակայության պայմաններում չեն կարող կայանալ ազատ, ժողովրդավարական ընտրություններ: Խոսքի իրավունքը և ԶԼՄ-ների տեղեկատվության իրավունքը, որոնք ըստ էության ժողովրդավարական հասարակարգի երկու հիմնական չափորոշիչներն են և ընկած են միջազգային համագործակցության հիմքում, կարգավորվում են միջազգային համաձայնագրերով: Պետություններն իրենց հերթին ստանձնել են միջազգային պարտավորություն՝ կատարելու համաձայնագրերի նորմերի պահանջները:

ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում և 27.1-րդ հոդվածում խոսքի ազատության համատեքստում երաշխավորված է յուրաքանչյուր անձի և լրատվամիջոցների տեղեկատվության ազատությունը: Ցանկացած տեղեկատվության ազատ տարածում ԶԼՄ-ների միջոցով (բացառությամբ պետական գաղտնիք համարվող և օրենքով պաշտպանվող տեղեկատվության), այդ տեղեկատվության մեջ քաղաքական և գաղափարախոսական բազմակարծության արտացոլում է, գրաքննության արգելում[9]:

---

[8] Տե՛ս ՀՀ օրենքը զանգվածային լրատվության մասին, հոդված 2. 2004թ.: HH orenqy Zangvatsayin lratvutyan masin, h. 2, 2004.

[9] Տե՛ս Комментарий к Конституции Российской Федерации (под общ. ред. Л.В. Лазарева). "Новая правовая культура", 2009 г., с. 258. Kommentarij k Konstitucii Rossijskoj Federacii (pod obsh. Red. L. V. Lazareva).

Սահմանադրական այս դրույթներն իրենց հետագա արտացոլումն են գտել տեղեկատվության ոլորտը կարգավորող իրավական նորմերում: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով (ընդունված 23.09.2003) սահմանվում է, որ տեղեկություն փնտրելու, ստանալու և հայցելու իրավունքը պատկանում է յուրաքանչյուրին, որի համար անձինք իրավունք ունեն դիմելու համապատասխան անձանց՝ տեղեկատվության տնօրինողին[10]: Նշված օրենքով սահմանվում են նաև տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները՝ տեղեկությունը գրանցելու, դասակարգելու և պահպանելու միասնական կարգի սահմանումը, տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության պաշտպանությունը, տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը, հրապարակայնությունը:

Ազատ ԶԼՄ-ների երաշխիքներ սահմանվում են նաև Հեռուստատեսության և ռադիոյի մասին (2000 թ.) օրենքում, Տեղեկատվության ազատության մասին օրենքում (2003 թ.), որոնցում նշված են ցանկացած անհատի և ԶԼՄ-ի գործունեության ազատության, մատչելիության և հրապարակայնության սկզբունքները՝ որպես սահմանադրական երաշխիքների՝ իրավահավասարության, օրինականության, արտահայտվելու ազատության և բազմակարծության սկզբունքների արտահայտություն[11]:

Լրատվամիջոցների ազատությունը հաճախ նույնացվում է մամուլի ազատության հետ: «Մամուլի ազատության» հասկացությունն ընդհանրապես ազատամտության տեսանկյունից նշանակում է տպագիր խոսքի ազատ լինելը պետությունից: Միլտոնը գրում է. «Տվե՛ք ինձ ազատություն ճանաչելու, ազատություն արտահայտելու մտքերս, իսկ ամենակարևորը ազատություն՝ դատելու ըստ խղճի...Եվ թող քամիներն անարգել տարածեն բոլոր գիտությունները երկրում, այնժամ, երբ արդարությունը դուրս է եկել պայքարի, արդարացի չի լինի գրաքննությամբ պայքարել նրա ուժի դեմ»: Չկա մեկ այլ դատավոր, որպիսին հասարակական կարծիքն է, որ կարող է «անցկացնել սահմանաբաժան գիծ, որով կսահմանազատվի սխալը իրականից»[12]: Ըստ Միլտոնի, ոչ միայն պետությունը, այլ նաև հասարակական կարծիքը չի կարող

---

[10] Տե՛ս ՀՀ օրենքը Տեղեկատվության ազատության մասին, ընդ. 23.09.2003, հոդված 6: HH orenq Teghekatvutyan masin, 23. 09. 2003, h. 6.

[11] Տե՛ս ՀՀ օրենքը Տեղեկատվության ազատության մասին, 2003, 23 սեպտեմբերի, հոդ. 4, 7: HH orenq Teghekatvutyan masin, 2003, 23. 09., h. 4.

[12] Տե՛ս **Мильтон Дж.** О свободе печати. М., 1907, с. 46-47. Milton J. O svobode pechati. M., 1907. S. 46-47.

գերակա լինել մամուլի նկատմամբ: Սակայն, մամուլի ազատությունը երաշխավորելու համար պահանջվում է առանձնահատուկ պաշտպանություն, որպեսզի այն կարողանա կատարել հասարակության պաշտպանի իր կարևոր դերը և այդպիսով տարածել հանրությանը հասարակական հետաքրքրություն ներկայացնող նյութեր և տեղեկատվություն: Մամուլի ազատությունը, լրացնելով տեղեկատվության ազատությունը, իրավունք է տալիս յուրաքանչյուրին անհատապես կամ այլոց հետ փնտրելու, ստանալու, տարածելու, փոխանցելու ամեն մի տեղեկատվություն (բացառությամբ օրենքով արգելված տեղեկությունների) բազմաթիվ ընթերցողներին, ունկնդիրներին, հեռուստադիտողներին, ինչպես նաև մասնավոր սեփականության իրավունքով ունենալ ԶԼՄ-ներ՝ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու դրանք: Բացի այդ, մամուլի ազատությունը պետության կողմից յուրաքանչյուր քաղաքացուն վերապահված իրավունքն է, որը ժողովրդավարության ապահովման համակարգի բաղկացուցիչ մասն է: Սահմանադրական երաշխիքների այսպիսի մեկնաբանությունն ազդեցություն է ունենում մամուլի ազատության ծավալի և չափի վրա: Օրենքով ապահովվում է մամուլի բազմակարծությունը՝ նպաստելով նույն այդ մամուլի մրցունակությանը և իրականացնելով պաշտպանություն տեղեկատվության հավաքման և տարածման գործում:

ՀՀ սահմանադրությամբ լրատվամիջոցների ազատությունից բացի, երաշխավորվում է տեղեկատվական այլ միջոցների ազատությունը:

Ընդհանրապես զանգվածային տեղեկատվության ազատությունը մասնավոր ԶԼՄ-ների ազատությունն է՝ հասարակական գիտակցության վրա իրենց ներգործության աստիճանով: Բացի դրանից, այս ազատությամբ ապահովվում է այն անձանց պաշտպանությունը, որոնց աշխատանքն անմիջականորեն կապված է տեղեկատվության հետ, այսինքն՝ լրագրողների[13]: Հետևաբար, մամուլի ազատությունը ենթադրում է մեկ այլ կարևոր սկզբունք՝ լրագրողների անկախությունը գրաքննությունից: Ասվածը վկայում է, որ ազատությունը հավասարապես տարածվում է ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ԶԼՄ-ների աշխատողների՝ լրագրողների վրա: Սակայն, «Զանգվածային լրատվության միջոցների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածից այնքան էլ պարզ չէ, թե որ անձանց է արգելվում խոչընդոտել լրագրողի մասնագիտական գործունեությունը, և ում կողմից կարող է կիրառվել հարկադրանք՝ ուղղված որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դրանից հրաժարվելուն: Ենթա-

[13] Տե՛ս Свобода и СМИ второй свежести. “Журналист”, М., 1998, N 2, с. 23. Svoboda i SMI vtoroj sveghesti. Zhurnalist. M., 1998. s. 23.

դրվում է, որ լրագրողների իրավունքները պաշտպանվում են միայն պետական-իշխանական մարմինների միջամտությունից, մինչդեռ լրատվության ոլորտում տեղի ունեցող իրական գործընթացները և առկա խնդիրները, որոնք կարող են առաջանալ լրագրողների և ԶԼՄ-ների սեփականատերերի միջև, մասնավորապես, երբ ցանկություն է առաջանում աշխատանքից հեռացնելու կամ փոխելու այս կամ այն խմբագրին կամ հաղորդավար-մեկնաբանին, վկայում են այն մասին, որ այս փոխհարաբերությունների հետ կապված հարցերը պետք է ավելի հստակ և մանրամասն գրված լինեն օրենսդրության մեջ, որպեսզի սահմանադրական երաշխիքները ստանան իրական և ոչ թե սոսկ դեկլարատիվ բնույթ[14]: Չնայած օրենսդրական արգելքին՝ ՀՀ-ում գրաքննության դեպքեր դեռևս արձանագրվում են: Անգամ այն երկրներում, որտեղ գրաքննությունն արգելված է սահմանադրական մակարդակով, լրագրողների գործունեությունը խոչընդոտելու և արգելելու փորձեր դեռ բավականաչափ տեղի են ունենում: Այսպես, Ռուսաստանի լրագրողների միությունը նշում է, որ թեև գրաքննությունն արգելվում է սահմանադրությամբ, այնուամենայնիվ, ՌԴ-ում շարունակվում են արձանագրվել գրաքննության բազմաթիվ դեպքեր: «Չնայած պետության Նախագահին և Գլխավոր դատախազին՝ որպես Սահմանադրության երաշխավորների ուղղված դիմումներին՝ բազմաթիվ մեղավորներ դեռևս չեն բացահայտվել և պատիժ չեն կրել»[15]:

Տեղեկատվական ոլորտը կարգավորող նորմեր սահմանված են նաև ՀՀ «Զանգվածային լրատվամիջոցների մասին» հիմնական օրենքում, որի 4-րդ հոդվածի համաձայն՝ «լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա»:

Անհրաժեշտ է սակայն նկատի ունենալ տեղեկատվական իրավունքի ոչ բացարձակ բնույթը. այն, թե ինչպես է խոսքի իրավունքը ենթարկվում օրենքով սահմանված անհրաժեշտ սահմանափակումների: Հարկ է նաև հատուկ ուշադրություն դարձնել ԶԼՄ-ի ազատության պետական–իրավական երաշխավորության բավական կարևոր կողմի վրա: Խոսքը ԶԼՄ-ի ազա-

---

[14] Տե՛ս **Заика Н. К.** Правовые основы средств массовой информации. СПб, 2005, с. 7. Zaika N. K. Pravovye osnovy sredstv massovoj informacii. SPb. 2005, s. 7.

[15] Տե՛ս **Рихтер А. Г.** Правовые основы журналистики. М., 2002, с. 68. Rikhter A. G. Pravovye osnovy zhurnalistiki. M. 2002, s. 68.

տության սահմանների, դրա սահմանափակման, քաղաքացիների, խմբագրությունների, լրագրողների պատասխանատվության մասին է:

Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումներ է պարունակում նաև ՀՀ ԶԼՄ օրենքի հոդված 7-ը: Մասնավորապես. 1) արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը, 2) արգելվում է տեսաձայնագրությամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման մասին առանց անձին զգուշացնելու, և այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար, և դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ, բացառությամբ այն դեպքի, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:

Այսպիսով, խոսքի ազատությունը ժողովրդավարական հասարակության հենասյուներից մեկն է և այդ հասարակության զարգացմանն ու անհատի ինքնադրսևորմանը նպաստող հիմնարար պայման[16]: Խոսքի և կարծիքի արտահայտման ձևերը պաշտպանվում են օրենքով: Այն ոչ միայն անձի միտքը, կարծիքը խոսքի միջոցով արտահայտելու հնարավորությունն է, այլ նաև քաղաքական գաղափարներ և կարծիքներ արտահայտելու իրավունք:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժողովրդավարությունը և լրատվամիջոցները միմյանցով պայմանավորված և անխզելիորեն փոխկապված կատեգորիաներ են: Ժողովրդավարության հիմքում ընկած են այն հիմնարար սկզբունքները, որոնք կանխորոշում են ԶԼՄ-ների ազատ և անխոչընդոտ գործունեությունը: Միևնույն ժամանակ, ազատ ԶԼՄ-ները իրենց հիմքում պետք է ունենան օրենքով սահմանված ժողովրդավարական և իրավական երաշխիքներ, առանց որոնց չի կարող կայանալ քաղաքացիական հասարակությունը, և հաստատվել իրական ժողովրդավարություն: ԶԼՄ-ների իրավական կարգավիճակի և գործունեության ազատության և անկախության երաշխավորը պետությունն է, որը, մի

[16] Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, «Իրավունք» 2010, էջ 303: HH Sahmanadrutyan meknabanutyunner. Erevan, «Iravunq», 2010. Eg 303.

կողմից, ոչ մի կերպ չպետք է միջամտի ՁԼՄ-ների գործունեությանը, մյուս կողմից՝ Սահմանադրության մեջ և օրենքներում ամրագրում է համապատասխան սկզբունքներ և երաշխիքներ, և այդպիսով խթանում ՁԼՄ-ների ազատ գործունեությունը:

Բանալի բառեր - ՁԼՄ-ների գործունեություն, ՁԼՄ-ների իրավական երաշխիքներ, մամուլի ազատություն, տեղեկատվության ազատություն, գրաքննություն, ՁԼՄ-ների անկախություն, խոսքի ազատության իրավունք, արտահայտվելու ազատություն:

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ДЕЯТЕЛЬНОСТИ СМИ

ЛИЛИТ ХАРАТЯН

СМИ и демократия тесно взаимосвязанные и неотделимые друг от друга категории. В своей деятельности СМИ руководствуются основополагающими принципами, составляющими основу демократии, в связи с чем законом предусмотрены соответствующие правовые гарантии и предпосылки. В свою очередь, гарантии являются основой функционирования СМИ, залогом демократического государства и становления гражданского общества. Государство, выступая в качестве гаранта свободы СМИ, с одной стороны принимает на себя обязательство не вмешиваться в деятельность СМИ, с другой - издает законы и правовые акты, гарантирующие независимость и защиту СМИ.

Ключевые слова - деятельность СМИ, правовые гарантии СМИ, свобода печати, свобода информации, цензура, независимость СМИ, свобода слова, свобода выражения.

CONSTITUTIONAL PROTECTION OF MASS MEDIA

LILIT KHARATYAN

Mass media and democracy are interdependent and unremittingly interrelated categories. Democracy is founded on fundamental principles, which envisages free and unobstructed activity of mass media. Free mass media must

have at its basis legal and democratic protections, without which civil societies cannot be approved, and real democracy cannot be established. The state guarantees the independence of mass media and provides legal status. The government should not in any way interfere with the activities of mass media on the one hand and on the other guarantee a constitutional and other legal protections, thus encouraging their activities.

Key words - Mass Media activities, Mass media legal guarantees, freedom of the press, freedom of speech, censorship, independence of media, freedom of information, freedom of expression.